



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

<< >> _____ 2018թ.

ք. Գյումրի, Գ. Նժդեհի 16

N: _____

հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

ՈւՂԵՐՁ

ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՕՐԵՐԻ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ շիրակցիներ

Ի սրտե շնորհավորում եմ Ամանորի և Սուրբ ծննդյան տոների կապակցությամբ:

Մենք հրաժեշտ ենք տալիս 2018 թվականին, որը բեկումնային էր հայ ժողովրդի կյանքում: Նոր Հայաստանի կերտմամբ մենք հիմք դրեցինք այն հիմնասյանը, որը դառնալու է հայ ժողովրդի բարօրության, նրանց հույսերի և ձգտումների արդարացման երաշխիքը: 2018 թվականին մեր երկրում անցկացվեցին աննախադեպ թափանցիկ ու արդար ընտրություններ: Շիրակի մարզում կյանքի կոչվեցին մի շարք ծրագրեր, վերանորոգվեցին կրթօջախներ, մանկապարտեզներ ու ճանապարհներ: Արվածը քիչ չէ, բայց անելիքներ էլ դեռ շատ ունենք: 2019 թվականից բոլորս մեծ սպասելիքներ ունենք: Վստահ եմ՝ Շիրակի մարզի հիմնահարցերը լինելու են կառավարության ուշադրության կենտրոնում և հաջորդ տարիները մարզի տնտեսության ու ժողովրդի համար լինելու են զարգացման ժամանակաշրջան:

Սիրելի՛ շիրակցիներ, կրկին շնորհավորելով Ամանորի և Սուրբ ծննդյան տոների կապակցությամբ, մաղթում եմ ամենայն բարիք:

Թող նոր՝ 2019 թվականը բոլորիս համար լինի հաջողության ու բարեկեցության տարի, թող իրականանան մեր սպասումերն ու հույսերը, թող բոլոր օջախներում իշխի համերաշխությունն ու սերը:

Շնորհավոր Ամանոր և Սուրբ ծնունդ:

Կ. ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ